

ԿԱՐԾԻՔ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Մոդրովյան Արմենուհի Վաչագանի “Հայաստանի ֆլորայի խնկածաղիկ սովորականի (*Origanum vulgare L.*) ֆիտոքիմիական, ապրանքագիտական առանձնահատկությունները և հակաօքսիդանտային, հակամանրէային ակտիվության ուսումնասիրումը” թեմայով ԺԵ 00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Ներկայացված ատենախոսական աշխատանքը նվիրված է Հայաստանի տարածքում աճող խնկածաղիկ սովորականի ապրանքագիտական, հումքի ձևաբանաանատոմիական հատկանիշների, որակի թվային ցուցանիշների, լուծահանվող նյութերի քանակական, եթերայուղի ստացման և դրա քանակական պարունակության որոշման, դաբաղանյութերի և ֆլավոնոիդների որակական, խնկածաղիկ սովորականի խոտի կենսաբանական ակտիվության, եթերայուղի և հանուկի հակառադիկալային ակտիվության վերլուծությանը:

Հայրենական հումքային պաշարների հանդեպ աճող հետաքրքրություններով պայմանավորված՝ այսօր մեծ նշանակություն է ձեռք բերում Հայաստանի բնական հումքային աղբյուրների ուսումնասիրությունը: Հայաստանի ֆլորան հարուստ է բուսական հումքի ամենատարբեր տեսակներով, ինչը պահանջում է հիմնարար հետազոտություն՝ մասնավորապես, դեղահումքերի ստանդարտավորման առումով:

Միաժամանակ, այս տեսանկյունից, արդիական է բույսերում արտաքին միջավայրի գործոնների ազդեցության ուսումնասիրությունը ԿԱՆ-ի կուտակման դինամիկայի վրա: Եվ մասնավորապես, այս խնդիրների ուսումնասիրությունը կարևոր է թե՛ բնապահպանական, թե՛ էկոհամակարգերի, և թե՛ տեսակային առանձնահատկությունների պահպանման տեսանկյունից:

Այսօր նշանակալի գիտագործնական հետաքրքրություն են ներկայացնում հայրենական ֆլորայի եթերայուղային որոշ բուսատեսակներ, մասնավորապես, շրթնածաղկազգիների ընտանիքին պատկանող խնկածաղիկ սովորականը (*Origanum vulgare L.*):

Ատենախոսական աշխատանքում իրականացված հետազոտության նպատակն է եղել Հայաստանի տարբեր մարզերում (Կոտայք, Լոռի, Տավուշ, Գեղարքունիք) վայրի աճող խնկածաղիկ սովորականի հումքի համալիր ֆարմակոգնոստիկ (ապրանքագիտական, ֆիտոքիմիական) և կենսաբանական ակտիվության ուսումնասիրումը բույսի անհատական զարգացման մինչծաղկման, ծաղկման, սերմնակալման շրջաններում:

Աշխատանքում առաջադրված խնդրի լուծման համար իրականացվել է ՀՀ տարբեր մարզերից մթերված խնկածաղիկ սովորականի խոտի ապրանքագիտական վերլուծություն, հաստատվել է հումքի ձևաբանաանատոմիական տարբերակիչ հատկանիշները և որակի թվային ցուցանիշները, դիտարկվել և գնահատվել է եթերայուղի կուտակման դինամիկայի օրինաչափությունները տարբեր բնակլիմայական պայմաններից մթերված խնկածաղիկ սովորականի թաց և օդաչոր հումքերում՝ բույսի ֆենոլոգիական տարբեր փուլերում, հաստատվել է խնկածաղիկ սովորականի քեմոռասային պատկանելիությունը: Ուսումնասիրվել է Հայաստանի տարբեր մարզերից մթերված հումքերում կենսաբանորեն ակտիվ նյութերի որակաքանակական կազմը, ուսումնասիրվել է նաև խնկածաղիկ սովորականի հումքի եթերայուղի և սպիրտային լուծամզվածքների կենսաբանական ակտիվությունը:

Հետազոտության գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ հետազոտվել է Հայաստանի ֆլորայում վայրի աճող խնկածաղիկ սովորական տեսակի եթերայուղի որակաքանակական կազմը վեգետացիայի տարբեր շրջաններում (մինչծաղկում, ծաղկում, սերմնակալում): Բացահայտվել է ՀՀ-ում վայրի աճող խնկածաղիկ սովորական տեսակի քեմոռասային պատկանելիությունը: Գնահատվել են Կոտայքի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի մարզերում վայրի աճող խնկածաղիկ սովորականի լավորակության ցուցանիշները

և ձևաբանաանատոմիական տարբերակիչ հասկանիշները վեգետացիայի մինչծաղկման, ծաղկման, սերմնակալման շրջաններում: Ցույց է տրվել, որ ի տարբերություն էթերայուղի, որը ցուցաբերում է հակամանրէային բարձր ակտիվություն, սպիրտային հանուկը ցուցաբերում է հակառադիկալային ակտիվություն, որը մոտ է կատեխինի ակտիվությանը: Առաջին անգամ հաստատվել են խնկածաղկի սպիրտային հանուկի տարբեր ֆրակցիաների և էթերայուղի նվազագույն ազդող կոնցենտրացիաները *E. coli* VKPM M-17 մանրէի նկատմամբ: Հիմնավորվել է բնակլիմայական տարբեր պայմանների ազդեցությունը խնկածաղիկ սովորականի խոտից էքստրահվող նյութերի առավելագույն ելքի, կուտակման դինամիկայի վրա՝ մինչծաղկման, ծաղկման, սերմնակալման շրջաններում: Սպիրտային հանուկի բենզոլային, քլորոֆորմային, էթիլացետատային, ջրային ֆրակցիաներում հաստատվել է կոսմոսիինի, լյուտեոլինի, ապիգենինի և սպիրտային հանուկում՝ ցածրամոլեկուլային միացությունների առկայությունը:

Ա.Վ. Մողրովյանի թեկնածուական ատենախոսությունը շարադրված է 159 էջի վրա, կազմված է ներածությունից, գրական ակնարկ, նյութեր և մեթոդներ, արդյունքների քննարկում, գործնական առաջարկություններ, օգտագործված գրականության ցանկ և հավելված բաժիններից: Ատենախոսությունը ներառում է նյութը պարզաբանող 17 աղյուսակ և 50 նկար: Ներածություն բաժնում հայցորդը հիմնավորել է խնդրի արդիականությունը, աշխատանքի նպատակն ու խնդիրները, գիտական նորույթը: Գրական ակնարկ բաժնում հեղինակը կատարել է մեծածավալ գրականության մանրակրկիտ վերլուծություն: Փորձարարական մասում նկարագրված են հետազոտության օբյեկտները, կենսաբանորեն ակտիվ միացությունների անջատման և ուսումնասիրման մեթոդները, ԿԱՆ-երի որակական և քանակական նույնականացման, եղանակները:

Ատենախոսության եզրակացությունները բխում են փորձերի արդյունքներից:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ընդգրկված են հրատարակված աշխատանքներում՝ 17 գիտական հոդված, 1 թեզիս և 1 արտոնագիր:

Ատենախոսական աշխատանքում ներկայացված են նաև գործնական առաջարկություններ, որոնք հիմնված են ստացված արդյունքների և կատարված վերլուծությունների վրա:

Ատենախոսությունը գերծ չէ նաև թերություններից, որոնց վերաբերյալ հարկ է նշել որոշ դիտողություններ և առաջարկություններ:

1. Հարկ է նշել, որ ատենախոսական աշխատանքում ընդունված և ժամանակակից մեթոդներով իրականացվել է ԿԱՆ-երի որակական հետազոտություն, սակայն ցանկալի կլիներ ներկայացվեր նաև քանակական տվյալներ և դրանք համեմատվեր գրականությունում առկա տվյալների հետ, դեղարտադրության մեջ խնկածաղիկ սովորականի կիրառությունը հիմնավորելու տեսանկյունից:
2. Աշխատանքում գրական ակնարկում նշվում է, որ խնկածաղիկ սովորականը ցուցաբերում է կումուլյատիվ հատկություն, քանի որ, իրականացվել է բազմակողմանի և մեծածավալ հետազոտություն, ապա ցանկալի կլիներ ուսումնասիրել նաև Հայաստանում աճող խնկածաղիկ սովորականի մակրո և միկրո տարրեր կուտակելու հատկությունը:
3. Հայաստանում աճող խնկածաղիկ սովորականի ֆլավանոիդները և դաբաղանյութերը որոշվել են գումարային (հանրագումար) տեսքով: Ցանկալի կլիներ իրականացնել վերջիններիս առանձին քանակական և որակական նույնականացումը:
4. Աշխատանքում ներկայացված տվյալների գրաֆիկական պատկերները չափից շատ ծանրաբեռնված են, երբեմն անընթեռնելի: Ցանկալի կլիներ դրանք առանձնացնել ըստ վեգետացիոն փուլերի:
5. Տեքստում կան առանձին խմբագրման կարիք ունեցող բառեր, ձևակերպումներ, տեխնիկական թերություններ, ինչպես օրինակ՝ ժելատինի լուծույթի, կամ՝ օրինակ, ջրաբաղնիքի դեպքում՝ 100°-ի նշումը, որոնք անհասկանալի են:



- 6. Ատենախոսական աշխատանքի եզրակացությունների 1, 4, 5 կետերը, կարծում եմ, կարելի էր խմբագրել 4 և 5-ը միավորել և տալ այլ ձևակերպմամբ, իսկ 1-ին կետում՝ եզրակացությունը ներկայացնել համառոտ շեշտադրումն անելով միայն ըստ մարզերի առավելագույն ելքերով եթերայուղային հումքերի արժեվորման վրա:
- 7. Ատենախոսական աշխատանքում ներկայացված Հայաստանում աճող խնկածաղիկ սովորականի որոշ ԿԱՆ-երի, ինչպես նաև եթերայուղի կազմի որակական հետազոտություններն իրականացվել են տարբեր լաբորատորիաներում, ուստի ցանկալի կլիներ հավելվածներում ներկայացվեր լաբորատորիաների կողմից տրված տվյալները համապատասխան բլանկների տեսքով:
- 8. Ատենախոսության գործնական առաջարկություններ բաժնում, 6-րդ կետում Ձեր կողմից առաջարկված խնկածաղիկ սովորական տեսակի հումքի դեղագրքային հոդվածի նախագծի մշակումը ցանկալի կլիներ, ըստ էության, ներառել նպատակի ամփոփ ձևակերպման մեջ:

Ներկայացված դիտողությունները և առաջարկություններն ամեննին չեն նսեմացնում պաշտպանությանը ներկայացված ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը, այն ամբողջությամբ ավարտուն աշխատանք է, իր գիտական արդյունքներով, մեթոդաբանությամբ և եզրահանգումներով: Ողջունելի է, որ ատենախոսական աշխատանքում ԿԱՆ-երի վերլուծության համար կիրառվել են ժամանակակից ճշգրիտ եղանակներ:

Մոդրովյան Արմենուհի Վաչագանի “Հայաստանի ֆլորայի խնկածաղիկ սովորականի (*Origanum vulgare L.*) ֆիտոքիմիական, ապրանքագիտական առանձնահատկությունները և հակաօքսիդանտային, հակամանրէային ակտիվության ուսումնասիրումը” թեմայով թեկնածուական ատենախոսությունն ավարտուն գիտական աշխատանք է, լիովին համապատասխանում է

Թեկնածուական ատենախոսություններին ՀՀ ԲՈԿ-ի կողմից ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է ԺԵ 00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ դեղագործական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս,

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի

ԿԱՄ-ի մաքրման և սերտիֆիկացման

լաբ. վարիչ, ք.գ.թ.

Ա.Հ. Ծատուրյան

Ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ

գիտական քարտուղար, կ.գ.թ.

Հ.Օ. Քոչոյան

9.01.2020

